https://www.euronews.com/2020/10/10/nagorno-karabakh-armenia-and-azerbaijan-agree-to-temporary-truce?fbclid=IwAR2BzHjM1EL8-GuN_pzi-xnP3aXa2OGWUwf7X_dUJpzCIqYZAxeUva1UcyA

Nagorno-Karabakh: Armenia and Azerbaijan accuse each other of violating ceasefire

Հայաստանն ու Ադրբեջանը միմյանց մեղադրում են հրադադարի ռեժիմը խախտելու մեջ

Հայաստանն ու Ադրբեջանը միմյանց մեղադրել են շաբաթ օրը ժամանակավոր հրադադարի՝ ուժի մեջ մտնելուց հետո մի քանի րոպեի ընթացքում այն խախտելու մեջ: Երկու երկրները ուրբաթ երեկոյան պայմանավորվել էին հրադադարի մասին Մոսկվայում ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի նախագահությամբ 11-ժամյա բանակցություններից հետո:

Լեռնային Ղարաբաղի վիճելի շրջանում գերիների փոխանակման եւ զոհվածների մարմինների դուրսբերում նախատեսող հրադադարի ռեժիմն ուժի մեջ է մտել շաբաթ օրը՝ տեղական ժամանակով կեսօրին: Զինադադարից մեկ ժամ անց հրապարակված հայտարարության մեջ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտարարել է, որ մի շարք բնակավայրեր գտնվում են հայկական զինված ուժերի հրետանային գնդակոծության տակ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը հերքել է հայկական զորքերի կողմից հրադադարի որևէ խախտում՝ մատնացույց անելով Ադրբեջանին: Մամուլի քարտուղարը Twitter-ում գրել է, որ «ադրբեջանական ստորաբաժանումները 12:05-ին սկսել են *Քարահանքեյլի* անունով շրջանի գրոհը»:

Հայ զինվորականները հայտարարել են, որ Ադրբեջանը գնդակոծել է Հայաստանի հարավ-արեւելքում գտնվող Կապան քաղաքի մերձակայքը, որի պատճառով զոհվել է մեկ խաղաղ բնակիչ: Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հերքել է Հայաստանի մեղադրանքները՝ անվանելով այն «սադրանք»:

Ի դեպ, ավելի վաղ՝ մինչեւ հրադադարի մասին համաձայնագրի ուժի մեջ մտնելը, երկու կողմերը միմյանց մեղադրել էին քաղաքացիական շրջանների գնդակոծման մեջ:

Լավրովն ուրբաթ երեկոյան լրագրողներին հայտնել է, որ երկու կողմերն «առարկայական բանակցություններ կսկսեն՝ խաղաղ կարգավորմանը շուտափույթ հասնելու նպատակով»:

Միջազգային հանրությունը բազմիցս կոչ է արել Հայաստանին եւ Ադրբեջանին համաձայնել անհապաղ եւ անվերապահ հրադադարի:

1990-ականների սկզբին Հայաստանն ու Ադրբեջանը արյունալի պատերազմ էին մղում Լեռնային Ղարաբաղի համար, որն ավարտվեց 1994թ. զինադադարով: Այդ ժամանակից ի վեր արձանագրվել են բռնության առանձին դեպքեր:

Լեռնային շրջանը գտնվում է Ադրբեջանում, սակայն վերահսկվում է Հայաստանի կողմից աջակցվող էթնիկ հայերի կողմից:

Նախկին երկու խորհրդային պետությունների միջեւ բախումը վերսկսվել է սեպտեմբերի 27-ին, եւ երկու կողմերն էլ միմյանց են մեղադրում վերջին բռնկման մեջ, որը վերջին տասնամյակներում ամենաուժեղն է:

Այդ ժամանակից ի վեր առնվազն 400 մարդ է սպանվել մարտական գործողությունների ընթացքում, իսկ տարածաշրջանի բնակչության կեսը՝ շուրջ 70 000 մարդ, տեղափոխվել է:

Կարմիր խաչ միջազգային կոմիտեն, որը երկու կողմերին օգնություն կցուցաբերի ժամանակավոր հրադադարի ժամանակ, այս շաբաթ ավելի վաղ հայտարարություն էր տարածել, ըստ որի՝ *հարյուրավոր առանցքային ենթակառուցվածքային օբյեկտներ /ինչպիսիք են հիվանդանոցները եւ դպրոցները/, կա՛մ ավերվել են, կա՛մ վնասվել ծանր հրետանու ռմբակոծությունից.*

Թարգմանությունը՝ Տաթեւ Սարգսյանի

Ղեկավար՝ Աստղիկ Հայրապետյան /բ.գ.թ., դոցենտ/